է Նրան «Ֆայատան» բառը գործածելու մասին իր տուած պատասխանի մէջ, որ բառ առ բառ թերգրված էր Գոչէնից: Ռացի այս Գոչէն այցելեց այդ «սատանայի վեղարը կրողին»: Տեղական մամուլն էլ պատւում է Սայիդին հասկանալի ակնարկութիւններով տալով նրան «կեատիբ» (գրագիր), «գլաբ-աղասի» (հարեմական պահապան), «ղուլան-փարասա» (սոգօանցի) և այլ մականուններ: Իսկ Սայիդ-փաշան «խելացի» կերպով լռում է, որ ապացուցանի անգլիացի խիստ ազատամտին «քաղաքական իր բարձր համբերողութիւնը»: Բայց առաջ ոչինչ չէ օգնում: Անողոք անգլիացին նայում է թիւրքերի վրա նոյնչափ արհամարհանքով շրջունքները շարժելով: Երևի շայթանն (սատանան) է նստել զգուելի գեաուրի մէջ, որ կատաղած շնից փաս է փարվում օրհնեալ դարպասդեսի մէջ (Կ. Պոլսի մէջ):

Բայց, այդ գեաուրի ներկայութեան շնորհիւ այդպիսի անկարգութիւններ են պատահում Ստամբուլի մէջ: Նորերումս հասաւ Կ. Պոլիս սափրած դունչ ունեցողներից մէկը, որոնք անգլիական մասլահաթխանայի (պարլամենտ) մէջ հռետորներ են անուանում: Այդ անբախտ հրէշը, փոխանակ սուլթանի վեքիլներից մէկին ներկայանալու, Գոչէնի մօտ նախաճաշելուց յետոյ իսկոյն այցելեց դարձեալ նոյն „սև վեղարին", պատրիարք Ներսէսին, որը թիւրքերէն իզուր չէ անուանվում „Կուրսուս", այսինքն անիրաւամանաք: Պատրիարքի մօտ գնացող բրիտանացու անունը Ջ. Ֆրայս է, որ թիւրքերէն նշանակում է գժոխքի որդի: Ահա այդ երկու անձնաւորութիւնները քաղաքի մէջ այնպիսի մի անկարգութիւն սկսեցին, որ տեսնված չէր այն ժամանակից, երբ իսլամը բաղդատուեց Խաչփորի ափերը:

Սկսվում են ճառեր, պատգամաւորութիւններ են ներկայանում զանազան ընկերութիւններից, միութիւններից, կանանց ընկերութիւններից, ազգասիրական շրջաններից և Հալեպն է իմանում, թէ էլի ինչ տեսակ սատանայական համայնքներից: Ամենքը շնորհակալութիւն են յայտնում զզուելի անգլիացուն, որովհետև նա վերկացաւ իր տեղից անգլիական դատարան խօսների ժողովի մէջ և չափազանց անմիտ կերպով մեղադրեց Հայաստանը կառավարող սուլթանի „փաուաւոր" պաշտօնեաներին: Ի զուր չէ կազմվել թիւրքաց առաջը, թէ „շունը շան որը չի կոխի": Որքան ողորմութիւններ և բարիքներ են ստացել սուլթանից այդ կեղտոտ գեաուրները (հայերը), բայց այնուամենայնիւ նրանք շնորհակալութիւն են յայտնում իրանց եղբորը, գեաուրին, որ նրանց համար երկու կոպեկի գործ չէ կատարել: Ոչ, ոչ, զուրանը ճշմարիտ է հրամայում, „թող չը բարձրանայ քո ձեռքը նրանց դլխից, որոնք Աստուածանից խլամին ստրկութեան են տուած": Յայտնի է, որ մարդարէն ասում է այդ այն գեաուրների մասին, որոնք ենթարկված են սուլթանի, այսինքն մարգարէի փոխանորդի իշխանութեանը:

Այսպիսի տպաւորութիւն գործեց թիւրքերի վրա նորերումս այստեղ եկած Օկսֆորդի համալսարանի իրաւաբանութեան դոկտոր, անգլիական պարլամենտի անդամ, յայտնի թիւրքասեաց Ջ. Ֆրայսը: Գրա փոխարէն թիւրքերն էլ նրա վրա „պատշաճ" տպաւորութիւն գործեցին: Ասում են, որ Ֆրայս մեծ քանակութեամբ գոկումենտներ հաւաքեց այն անկարգութիւնների մասին, որ թիւրքերը գործում են իրանց կառավարած նահանգների մէջ:

Երբ Կ. Պոլսի օրիորդական ուսումնարանների աշակերտուհիները նրան մի ադրես էին ներկայացնում, հեռեւալ սրտաշարժ պատկերը կատարվեցաւ: Տան և հինգ տարեկան հայուհի օրիորդը Ֆրայսին շնորհակալութեան զրութիւնը յանձնելու ժամանակ, պատրաստվում էր մի քանի խօսք ասել հայաստանցի իր քոյրերի պատւի պաշտպանութեան համար, բայց յանկարծ հէնց առաջին խօսքը արտասանելու ժամանակ՝ «ինդրում ենք, պարոն», նա չը կարողացաւ զսպել իր զգացմունքները և սկսեց հեկեկալով լաց լինել: Ընկասված զրանք փորձված ներասանուհու արտասուքներ չէին, այլ զգացմունքների արտայայտութիւն մի անմեղ սրտի, որ վշտացած էր իր տարաբաղդ քոյրերի տանջանքներից:

Հայերի տրամադրութիւնը դէպի Ռուսաստանը քննելով, Ջ. Ֆրայս նշանաւոր համեմատութիւններ էր անում օրինակ մի օրակարգ քաղաքական հարց քննելու ժամանակ Ֆրայս այցելեց հայոց ազգային ժողովը և նրա պատուաւոր նախագահից, պատրիարք Ներսէսից, թոյլատրութիւն խնդրելով. Ջ. Ֆրայս ֆրանսերէն լեզուով արտասանեց հետեւեալ փոքրիկ ճառը: «Ահա, երբե Գրեգորեան քրիստոնեայ ժողովրդների հաւատարիմ բարեկամ, ինձ թոյլ կը տամ յայտնել, որ հաւատում եմ Հայաստանի քաղաքական վերածնվելուն, քանի որ նրա ետեւից կանգնած են երկու այնպիսի հզոր հսկաներ, ինչպես Ռուսաստանը և ազատասիրտ Անգլիան»: Ռուսաստանի անունը Անգլիայի հետ միացնող հռետորի խօսքերը մեծ ազդեցութեամբ ընդունվեցին ժողովի բոլոր 120 անդամներից, որոնք անվերջ ծափահարութիւններով ծածկեցին Ֆրայսի ճառը: Մինչդեռ յայտնի է, որ նոյն Ֆրայս հաստատամտութեամբ անց էր կացնում անգլիական պարլամենտի մէջ այն միտքը, որ հայերին բաւականութիւն տալու գործի մէջ Անգլիան առաջնորդող դեր կատարէ, որպէս զի անգոր դարձնէ Ռուսաստանի ազդեցութիւնը Տիգրիս և Եփրատ գետերի դաշտերի վրա: Ուրեմն ի՞նչպէս պէտք է համաձայնեցնել այդ երկու զանազան մտքերը:

ԲԱՐԵՆՈՐԴԱԳՐԱՆՑ ԴԻՐ ՆԻԱԳԻՐ

—

Վաղվայ լրագրին երկէ իւր սովորականէն իսկ ժամուշ ելաւ հրատարակել կարենալու համար Ռ. Դրան վերջին ծանուցագրին պաշտօնական (թարգմանեալ) պատճէնն, որ իւր թերթին մէջ չորս սեանակ կը ընու: Այս ծանուցագիրը մասնաւոր գլուխներու բաժնուած է:

Տուչիլեռն պարպելու համար, տեղական ժողովրդեան իրաւունց պաշտպանութիւն, իրաց արդի վիճակին պահպանութիւն և նաւային ցոյցին վերջնականապէս լուծմն իբրև պայման առաջարկված էր: Օսմանեան դեսպաններէն եկած հեռագրաց և օտար դեսպանաց վերջին յայտարարութեանց նայելով, այս երեք պայմաններէն առաջինը Պէրլինի դաշնագրին արտաքսրդութիւնը լմնելով, անոր ամրապնդումը կարելի է եղեր. երկրորդ պայմանին նկատմամբ պարտականութիւն ստանձնել անհնար, իսկ երրորդ պայմանն ընդունել բացարձակապէս անկարելի է եղեր: Տէրութեանց նաւատորմերը, Բոսֆորս համախմբեալ, գործնական ձեռնարկու